

ԲԱՐԵՎԵՆԴԱՆԻ ԾԻՍԵՐԳԻ ՄԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԳՐԱՌՈՒՄ

1991 թ. հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին, մեկ ամիս ժամանակով, Հունգարիայի գիտությունների ակադեմիայի ազգագրության ինստիտուտի հրավերով գործուղվեցի Բուդապեշտ: Հիմնական նպատակն էր տեղում ծանոթանալ հայ-հունգարական բանահյուսական ու ազգագրական աղբյուրներին, հնարավորության սահմաններում պարզել և ուսումնասիրել հայ-հունգարական բանահյուսական առնչությունները: Գործուղումը եղավ բավական արդյունավետ: Հունգար գործընկերներիս օգնությամբ (Էսթեր Կիշբան, Պետեր Վերեշ) ծանոթացա անցյալի հունգարահայ նշանավոր գործիչ Քրիշտոֆ Սոնգոտի (Խաչիկ Սոնգոտյան–Աստվածատուրյան) (1843–1907 թթ.) գործունեությանը. նա սովորել է Տրանսիլվանիայի Սամոշույվար (հետագայում վերանվանված Գեռլա) հայաշատ քաղաքի հայ կաթոլիկական գիմնազիայում, եղել է գերագանցիկ աշակերտ: Ավարտելուց հետո 40 տարի դասավանդել է այդտեղ, իսկ 1884–1904 թթ. շուրջ 30 տարի եղել է այդ գիմնազիայի անփոփոխ վերատեսուչը: 1887-ին հիմնադրել է «Armenia» ամսագիրը և այն խմբագրել է ու հրատարակել մինչև իր մահը: Նա աշխատակցել է «Մշակ», «Արևելք» և հայկական այլ պարբերականներին:

Սոնգոտը ամեն կերպ ջանացել է Գեռլա քաղաքը վերածել հայկական մշակութային կենտրոնի: Այն իր հայաշատ բնակչության պատճառով հաճախ կոչվել է Armenopolis–Հայաքաղաք: Այստեղ, 1905 թ., նրա ջանքերով հիմնադրվել է Հայկական թանգարանային ընկերությունը, սակայն Հայոց թանգարանի բացումը տեղի է ունեցել նրա մահից հետո: Նա 1892-ին հրատարակել է Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» հունգարերեն թարգմանությունը, 1898-ին տպագրել է «Հունգարահայերի գերդաստանների տոհմաբանությունը» աշխատությունը, իսկ 1901–1903 թթ. ընթացքում «Մոնոգրաֆիա» ընդհանուր անունով հրատարակում է հայոց պատմությանը, ազգագրությանն ու բանահյուսությանը նվիրված քառասուոր աշխատությունը: Եղել է Հունգարիայի ազգագրական ընկերության անդամ¹:

Հունգարահայոց բանահյուսական նյութերն ընդգրկված են հիշյալ քառասուորյակի IV հատորում՝ լատինատառ հայերենով և զուգահեռ հունգարերեն թարգմանությամբ: Ահա այս նյութերից ընտրել ենք միայն մեկը, տպագրված հատորի 316–317 էջերում, «Դադ ուրախութեան» խորագրով: Ըստ հրատարակչի ծանուցման՝ այդ տաղը գրառվել է 1784 թ. հունիսի 14-ին Գեռլա քաղաքում. «Գրեցաւ այս գիրս ձեռամն Խաչիկ Սօնկօտեան»: Գրքի հրատարակիչ նույնանուն Խաչիկ Սոնգոտյանի (Քրիշտոֆ Սոնգոտ) հաղորդման համաձայն, տաղ գրառող Խաչիկ Սոնգոտյանը եղել է իր ազգականը: Սույն փաստն ինքնին շատ արժեքավոր է, քանզի գրառումը վերաբերում է XVIII դարի վերջին քառորդին, երբ մեզանում տակավին չէր սկսվել ժողովրդի կենդանի գոյատևող բանա-

¹ Քր. Սոնգոտի մասին տվյալները քաղված են Magyar Neprajzi Lexikon, h. V, Butapest, 1982 և Ս. Քոլանջյանի հանրագիտարանային հոդվածներից. տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 10, Երևան, 1984:

վոր ավանդությունից բանահյուսական նյութերի գրառումը: Վերջինս պատմական իրողություն դարձավ մոտ մեկ հարյուրամյակ անց՝ Գար. Սրվանձտյանի նախորդների, իր և ժամանակակիցների կողմից: Այս առումով սույն գրառումն ունի պատմական արժեք, պատկանում է բանահյուսական վաղագույն գրառումների թվին և, իբրև այդպիսին, իր հետ բերում է հնության որոշակի հիշատակներ:

Նախ՝ այն, որ առաջին և վերջին տան կրկնակներում ուղղակի հիշատակ կա ծեսի անվան՝ բարեկենդանի (որի առնչությամբ կատարվել է երգը) ու այն իբրև նոր տարի ըմբռնման հետ («Միեզ պարի դարին, միեզ պարիզենտան» կամ «Միեզի պարիզենտան, պարի դարին»): Ապա, անկախ երգի բնագրի լատինատառ գրությունից, ծիսերգում բավական հարազատորեն պահպանված է բարբառի հնչյունաբանությունը, որը, փաստորեն, վերարտադրում է Առտիալի բարբառի ուշմիջնադարյան արտասանությունը, որը բարբառագիտական առումով կարևոր արժեք է ներկայացնում: Եվ առհասարակ ծիսերգն ամբողջությամբ բանահյուսական բնագրի շատ հաջող նմուշ է: Ելնելով երգի բովանդակությունից ու բնույթից, այն մեր կողմից ենթարկվել է վերատողատման: Այլ միջամտություններ չեն կատարվել:

Բարբառագիտական առումով, թերևս, ավելորդ չէ դնել մի քանի բառերի բարբառային ձևերի բացատրությունները. աձ-այծ, կալ-գայլ, էկի-այգի: Երագ-ը, հավանաբար, արեգ, արեգակ բառի բառաձևն է, քանզի այս ծիսերգի բարբառային այլ տարբերակներում հաճախ է հանդիպում *տակն արևին* բառակապակցությունը, որ նշանակում է արևի տակ, երկնքի տակ, այսինքն՝ աշխարհում:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԴԱՂ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

1. *Եզեք, դեսեք, թե վո՞վ գերիլ է գէկին,
Եզան, դեսան. աձ գերիլ է գէկին.
Աձըն՝ գէկին,
Դագն երագին,
Միեզ պարի դարին,
Միեզ պարիզենտան:*
2. *Եզեք, դեսեք, թե վո՞վ գերիլ է ըզաձըն.
Եզան, դեսան՝ կալը գերիլ է ըզաձըն:
Կալը՝ ըզաձըն,
Աձըն ըզէկին...
Դագն երագին...*
3. *Եզեք, դեսեք, թե վո՞վ գերիլ է ըզկալը.
Եզան, դեսան՝ արչը գերիլ է ըզկալը.
Արչը՝ ըզկալը,
Կալը՝ ըզաձը,
Աձը՝ ըզէկին...
Դագն երագին...*
4. *Եզեք, դեսեք, թե վո՞վ գերիլ է ըզարչը.
Եզան, դեսան՝ ինձը գերիլ է ըզարչը.*

- Ինձը՝ ըզարչը,
 Արչը՝ ըզկալը,
 Կալը՝ ըզաձը,
 Աձը՝ ըզէկին...
 Դագն երագին...
5. Եզէք, դեսէք, թե վո՞ւլ գերիլ է ըզինձը.
 Եզան, դեսան՝ թուրը գերիլ է ըզինձը.
 Թուրը՝ ըզինձը,
 Ինձը՝ ըզարչը,
 Արչը՝ ըզկալը,
 Կալը՝ ըզաձը,
 Աձը՝ ըզէկին...
 Դագն երագին...
6. Եզէք, դեսէք, թե վո՞ւլ գերիլ է ըզթուրը.
 Եզան, դեսան՝ ժանգըր գերիլ է ըզթուրը.
 Ժանգըր՝ ըզթուրը,
 Թուրը՝ ըզինձը,
 Ինձը՝ ըզարչը,
 Արչը՝ ըզկալը,
 Կալը՝ ըզաձը,
 Աձը՝ ըզէկին...
 Դագն երագին...
7. Եզէք, դեսէք, թե վո՞ւլ գերիլ է ըզժանգը.
 Եզան, դեսան՝ մուգը գերիլ է ըզժանգը.
 Մուգը՝ ըզժանգը,
 Ժանգը՝ ըզթուրը,
 Թուրը՝ ըզինձը,
 Ինձը՝ ըզարչը,
 Արչը՝ ըզկալը,
 Կալը՝ ըզաձը,
 Աձը՝ ըզէկին...
 Դագն երագին...
8. Եզէք, դեսէք, թե վո՞ր գերիլ է ըզմուգը.
 Եզան, դեսան՝ գաղուն գերիլ է ըզմուգը.
 Գաղուն՝ ըզմուգը,
 Մուգը՝ ըզժանգը,
 Ժանգը՝ ըզթուրը,
 Թուրը՝ ըզինձը,
 Ինձը՝ ըզարչը,
 Արչը՝ ըզկալը,
 Կալը՝ ըզաձը,
 Աձը՝ ըզէկին...
 Դագն երագին,
 Միեզի պարիզենտան, պարի դարին: